

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(«ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅ» խորագիրը կրող ավարտական շարադրույան 3-րդ գլուխը):

Սայաթ-Նովայի մասին կենսագրական քիչ տեղեկություններ կան: Մահվանից հետո, կես զարուց ավելի նրա անունը և ստեղծագործությունը մնում են անհայտության մեջ: Միայն 1852 թվին էր, որ հմուտ բանասեր Գեորգ Հախվերդյանը¹, զբաղվելով գուսանների երգերի հավաքման գործում, գտնում է Սայաթ-Նովայի երգերի դավթարը և դրան մի ընդարձակ կենսագրական ու թիվականի բարբառի ուսումնասիրություն կցելով՝ հրատարակում նույն թվին, այսպիսով կորստից փրկելով մեծ բանաստեղծի զրագան ժառանգությունը:

Հախվերդյանի գրած կենսագրական նյութերը վերցված են հենց իր՝ Սայաթ-Նովայի կենսագրական բնույթ կրող բանաստեղծություններից և ժամանակակիցների ավանդականությամբ: Բայց չնայած դրան, նրա կազմած կենսագրությունը միակ և գլխավոր աղբյուրն է բանասերների համար:

«Ճարիկ յիսով տարի առաջ (XVIII դարի միջներին), — գրում է Հախվերդյանն իր գրքի առաջաբանում, — մէկ խեղճ աննշան հայ գալիս է Հալէրից, երկի բախտ որսալու՝ Վրաստան, ու բնակվում է Թիֆլիզ քաղաքում, որտեղ պատմություններից: Բայց չնայած դրան, նրա կազմած կենսագրությունը միակ և գլխավոր աղբյուրն է բանասերների համար:

^{1.} Առաջին հրատարկության մեջ՝ Ախվերդյանց (Հավանաբար ուստի արտասանությամբ):



բարցի աղջկան վրայ: Սըրանց ըլում է տղայ որին տալիս են Արութին (Հարություն) անունը²:

Սայաթ-Նովայի ծննդավայրը Թիվիկսին է, այդ մասին բանաստեղծն իր աղբբեշշաներեն մի խաղում հետևալուն է ասում:

«Սայաթ-Նովայի վաթանիցըն ճարց կուտան. Մեկը կոսե Հինդն է, մեկը Համադան... Վաթանը Թիվիկսին է սամթը՝ Վրաստան, Մերըս հավլաբարցի, հերսո հալարյուա³: Ի՞ր թվին է ծնվել Սայաթ-Նովան:

Այդ հարցը երկար ժամանակ վիճարկվել է: Ոմանք այն համարել են 1722, ուրիշներ՝ 1712, և դեռ ուրիշներ՝ 1718 թվականները: Հարցը լուծել է ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Մ. Հասրաթյանը: Նա վերծանել է բանաստեղծի որդի Օհանի կողմից աղավաղված 2-րդ (ՄԴ) թեզնիս խառը, որի առաջին տան երկրորդ տողը՝ «Հասա բահ, հասա չի, հասա սե...», ծածկագրված է եղել այդ երգը գրելու տարին:

2. Գ. Հախվերդյան, «Գուտանք», Մոսկվա, 1852 թ., էջ 2 (առաջաբան):

3. Սայաթ-Նովան իր ծնողների մասին տեղեկություն է տալիս նաև 1766 թվին Կալսի բարվանսարայում գրած իր կրօնական մի ժողովածուի հիշատակագրության մեջ, որտեղ նա ասում է. «Ով քննիցը ողջ հիշեա զգեսող գրուս մեղապարտ Ստեփանս բահանայս, որ Սայաթ-Նովա կոչեն և հայրն իմ մահականի կարապետ և մայրն իմ Սառա»:

Բնագրում եղել է ոչ թե՝ «Հասա ըաե, Հասա սե», այլ՝ «Հասա Ռա է, Հասա Զա Ռա, Հասա սէս», ապինքն ՌՉԾէ (1757) թվականին. և որովհետև նախավերշին տողում ասում է՝ «Սայեաթ-Նովա տարի էլավ քառասուն», ապա այդ նշանակում է՝ որ 1757 թվին Սայաթ-Նովան քառասուն տարեկան էր, ուստի և 1757—40=1717 թիվը պետք է ընդունել որպես երգչի ծննդյան թիվը:

Փոքր հասակից Սայաթ-Նովայի ծննդյան ուղարկում են ջուզհակի մոտ՝ արհեստ սովորելու: Շոտով նա այնքան է կատարելագործում իր արհեստը, որ նույնին մի մերժենա է հնարին, որով կտավը փողոցում հինելու փոխարին, հինում և գործում է տանը: Զգալով իր մեջ բանաստեղծական շնորհը, Սայաթ-Նովան կտավ գործելու հետ միաժամանակ հորինում է երգեր և «Սուրբ Կարապետի կարողութինով» սովորում նվազել՝ քյամանշի, չոնգուրի և ամբուրի վրա: «Վերջն,— գրում է Համավերդյանը, — մքուքն փոխած քամանշի վրայ, սրա շատ բան տեսնին խոստանալով՝ համարձակ դուս է եկել մելդան, որտեղ իր աշուղղական հոչակավոր Սայեաթ-Նովան անունով մոռացնել է տրեել ջուզհակ Արութինին»:

Սրանք են մեր ունեցած որոշակի տեղեկությունները Սայաթ-Նովայի մանկության և պատանեկության տարիների մասին: Այնուհետև, թե ջուզհակ Արութինն ե՞ր դարձավ «Սայաթ-Նովա», որտեղ՝ ստացավ իր կրթությունը, ո՞րքան տեսեց նրա ուսման ընթացքը, ի՞նչ գործով գրաղվեց մինչև 1744 թիվը՝ մինչև Հերակլ Ա-ի պալատական երգիշ դառնալը, հայտնի չէ: Կան միայն ենթադրություններ՝ հիմնված երգչի այս կամ այն ինքնակենսագրական բնույթ կրող բանաստեղծությունների վրա:

4. Վերշին ուն բանաստեղծը բերել է հանդակապ տողերի բոլոր թեզնիսի բառերի լրացման համար՝ «Հասա սէ»:

5. Մանրամասնությունները տե՛ս ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», սերիա Ա, № 3, 1943 թ., Մ. Հասրաթյան, «Սայաթ-Նովայի հայերեն մի բանի խաղերի մասին»:

6. Որ իրոք Սայաթ-Նովան փոքր հասակից եղել է արհեստավոր, այդ հաստատվում է նաև երգչի աղքաներն գրած մի ուսանավորով, որտեղ նա ասում է,

«Երբ տաներիու տարիս լրացավ, Հանձնեցին
ինձ վարպետի...»

Տասնըշորս տարիս լրացավ, վարպետին հասցրի
խալաթ»:

7. Համավերդյան, «Գուսանք», չշ է (առաջարան):

Ի՞նչ կրթություն է ունեցել Սայաթ-Նովան: Այս հարցին վերաբերյալ սայաթնովագետներից ումանք այն կարծիքն են հայտնել, թե նա ինքնուա կիսագրագետ է եղել, վրացերեն գրագիտության մեջ ավելի հմտության հայերենի:

Այդպիսի կարծիք մեր երգչի գրագիտության աստիճանի՝ մասին՝ միանգամայն սիսալ է և չի համապատասխանում բանաստեղծի ստեղծագործության մեջ արտահայտված մտավոր մեծ պաշտօրին ու գիտությանը: Սանահնում, թե մի այլ տեղ, հայտնի չէ, Սայաթ-Նովան ստացել է հիմնավոր կրթություն: Խմացել է վարդ գրաբար (այդ երևում է Կամի քարվանսարայում նրա ձեռքով գրած կըոնական ժողովածուից): Տիրապետել է հայերենին, աղքանեցաներենին և պարսկերենին, ոչ միայն խոսելուն, այն գրել-կարդալուն: Մանոթ է հայ մատենագրությանը: Դիտի և, օ, ֆ տառերի գործածության ժամանակաշրջանը⁸, որ դժվար թե իմանար կիսագրագետ «ջուզհակ Արութինը»: Մանոթ է և հոնական փիլիսոփայությանը: Խոսելով իր ստեղծագործության արժեքի մասին, Սայաթ-Նովան իր հայերենի խալիքը մեկում ասում է.

«Կանց յոթըն իմաստնասիրացն շատ է էս քու Սայաթնովու բանքիրըն մեմեկ»:

Նա գիտեր նվազագույն և ելքուպական ժողովուրդների մասին: Ոներ ենի Դունյայի, այսինքն նոր աշխարհի՝ Ամերիկայի լուրը: Սայաթ-Նովան իրազեկ էր նաև ժամանակաշրջանի առաջադեմ գիտությանը, օրինակ՝ նրան հայտնի էր, որ երկրագնդի երեք մասը ջուր է, մի մասը՝ ցամաք.

«Մեռնիմ արթար քարամաթիթ, կինքում մենակ ինձ մի թող. եկ, աշխարհը մի բաժանի՝ լիրիք ջուր է, մեկը՝ հողք⁹. ասում է բանաստեղծը իր աղքանեցաներեն մի խաղում, դիմելով սիրուհուն:»

Այս բոլորը ցույց են տալիս, որ հայ երգի հանճարեղ վարպետը եղել է ժամանակի ամենակրթված մարդկանցից մեկը, ծանոթ էր իր ժողովրդի անցյալին ու կուլտուրային:

8. Այդ մասին տե՛ս Մ. Հասրաթյանի «Հոդվածը ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի «Տեղեկագրություն»», էջ 37:

9. Մեջ բերվող բոլոր վրացերեն և աղքանեցաներեն բանաստեղծությունները արվում են 1945 թվին Երևանում Հայպետհրատի կողմից հրատարակված «Սայաթ-Նովա» ժողովածուից, որի վրացերեն և աղքանեցաներեն երգերը հայերենի է թարգմանել Մ. Հասրաթյանը:

Ինչպես վերեւում ասվեց, Սայաթ-Նովայի կյանքի մասին, նրա շուշակ դասնալուց հետո մինչև Հերակլ Ա-ի պալատական երդիչ գառնալը, տեղեկություններ չկան: Ենթադրվում է, որ այդ անծանոթ ժամանակաշրջանում նա ճանապարհորդել է զանազան երկրներ, եղել է նաև Հնդկաստանում:

«Տասն և յոթ տարիս լրացավ դեռ չէի ես դասատան,

Տասն իննը տարիս լրացավ, տեսա Հարաշ ու Հնդկաստան»:

Այս և նման մի քանի բանաստեղծություններից են եղով, սայաթնովագետներից մի քանիսը նրա Հնդկաստան գնալը կապում էն Նադիր-Շահի Հնդկական արշավանքի հետ:

Հայտնի է, որ Նադիր-Շահը 1735 թվին իր իսկ սկսած պարսկա-թյուրքական պատերազմում հաղթող դուռս գալով, Մուղանի հաշտավայրում շահ հոշակեց և երկու տարի անց՝ 1738 թվին արշավանք կատարեց դեպի Հնդկաստան՝ Մեծ Մողոլի դեմ:

Նադիր-Շահը Հնդկաստան արշավելիս, իր հետ տանում էր երգիչերամիշտների մի մեծ խումբ: Ենթադրվում է, որ այդ խմբի մեջ եղել է և Սայաթ-Նովան: Իսկ թե ի՞նչպես է նա ընկել Նադիրի երաժշտախմբի մեջ, դրան ունեին իրենց պատասխանը նրա Հնդկաստան կատարած ճանապարհորդության ինդրի պաշտպանները, որոնց գիսավորն էր Սաշա Օգանեզաշվիլին¹⁰:

Օգտվելով Արրահամ Կրետացու պատմությունից (Կրետացին պատմում է, որ 1725 թվին Մուղանի դաշտավայրում Նադիր-Շահի կողմից կազմակերպված Բայրումի տոնին մասնակցում էին 22 մեծ ու փոքր գուսաններ¹¹) Սաշա Օգանեզաշվիլին պնդում էր, որ Նադիր-Շահը Կովկասից Պարսկաստան վերադառնալիս, իր հետ տարել է սաղանգարներ, որոնց թվում է Սայաթ-Նովային:

Այնուհետև ենթադրվում էր, քանի որ Նադիր-Շահի Հնդկական արշավանքին մասնակցում էր Վրաստանից Հավաքագրված զորք, ինչպես և վրաց արքայազն Հերակլը, ուստի և Սայաթ-Նովան կարող էր հենց սրանց հետ գնալ և որպես նվազածու մասնակցել Նադիր-Շահի դեպի Հնդկաստան կատարվող արշավանքին:

10. Տե՛ս նրա հոդվածը՝ «Մարտակոչում», 1926 թ., № 106:

11. «Արրահամ Կրետացոյ Պատմութիւն անցիցն իրոց և Նադիր Շահին Պարսից», Վաղարշապատ, 1870 թ., էջ 50:

Սաշա Օգանեզաշվիլու և մյուսների ենթադրությունները՝ Սայաթ-Նովայի Հնդկաստան դնալու մասին, ժամանակին հերքել են հայտնի սայաթնովագետներ՝ Գեորգ Ասատուրը¹² և Գարեգին Լևոնյանը¹³, Այս վերջինս իր գրքի տուաջարանում՝ հերքելով Սաշա Օգանենեզաշվիլու և մյուսների կարծիքները, միաժամանակ ընկնում է երկմտության մեջ, նոր հայտնաբերված նյութի՝ «Թամբուրի Արութինի» (կամ Քյուչուկ Արութինի) օրագրի մասին Փարիզում Արմենակ Սագրայանի 1929 թվին «Անահիտ» հանդեսի Ա. տետրակում Նոր-Չուղայի մասին գրած հոդվածի ծանոթագրության պատճառով (էջ 63), որի բովանդակությունը հետևյալն է.

«Թամպուրի նվազող հայ մը, Թամպուրի Արութինի, որ Նադիր-Շահի ծառայության մեջ էր և անոր հետեւցավ իր Հնդկաստան մղած պատերազմներու մեջ, օրագրություն մը ձգած է, ուր կուտա այդ Շահին վերաբերող, իրականեն առնված, հատկանշական մանրամասնություններ... Այս հետաքրքրացարժ օրագրությունը, հայ տառերով, բայց թյուրք լեզվով գրված, հրատարակված է Վենետիկ, 1800-ին, Յաղուր Արութինի միաշա անոր Գրանսերեն թարգմանությունը տվավ «Bulletin de l'Institut Egyptien»-ի մեջ և առանձին հրատարակությամբ»:

Ահա այս ծանոթության մեջ գտնվող մի քանի բառեր՝ «Արութինը», «Թամբուրի», «հայ տառերով» և «թյուրք լեզվով գրված» գրությունը գայթակղության քար են զառնում սայաթնովագետների համար, և նրանք առանց Թամբուրի Արութինի օրագրության տեքստը կարգալու, ենթադրում են, որ օրագրությունը գրողը՝ Թամբուրի Արութինը, նույն ինքն ամրուրացի (Գ. Հայսվերդյան) Սայաթ-Նովան է՝ «զուշակ Արութինը»:

Ո՞վ է Նադիր-Շահի երաժշտախմբի հետ Հնդկաստան գնացող Թամբուրի կամ Քյուչուկ Արութինը, իրոր այս Արութինը մեր մեծ բանաստեղծ Սայաթ-Նովան է, թե՝ մի ուրիշ հայ երաժիշտ, զուգադիպությամբ Արութին անունով: Այս Հարցին պատասխանը մենք գտնում ենք Հայկական ՍՍՌ Ժողկոմսովեսին կից Պետական ձեռագրատան 1941 թվին հրատարակած «Գիտական նյութերի ժողովածուակի № 1-ում՝ Քյուչուկ Արութինի «Պատմություն Թահմազ Ղուլու» օրագրության մեջ:

12. «Եւ. Հայաստան», 1926 թ., № 87; Գ. Աստուր, «Մ-ի Հարցը»:

13. Գ. Լևոնյան, Սայաթ-Նովա, Հայպետհրատ, 1931 թ., էջ 24:

«Հազար հարյուր բառասում ութը թվին¹⁴ (սկսում է իր օրագրությունը Քյուչովկ Արութինը) ախոռապետությունից բարձրացած Մուտաֆա փաշալի և դեսպան Ավտիլ Զերի խանի հետ մեկնեցինք դեպի Իրան:

Ութը ամսում հասանք Իրան: Այն ժամանակ Իրանի Շահը Թահմազ-Ղուկին էր: Սպահան հասանք, բայց Թահմազ-Ղուկին այնտեղ չէր, գնացել էր Ղանդահարը պաշտրել էր»:

Այնուհետև շարունակելով իրենց ճանապարհորդությունը, նրանք շուտով հասնում են Ղանդահար: Այստեղ Քյուչովական դեսպանները մի քանի օր Նադիր-Շահի մոտ մնալուց հետո, վերջացնում են իրենց գործը և հետ վերադառնում: Խոկ Քյուչովկ Արութինը մնում է Նադիր-Շահի մոտ: «Մենք,— ասում է նա, — մնացինք Թահմազ-Ղուկին մոտ: Մեզ նվագածուների մեջ տեղ տվեցին»¹⁵:

Ղանդահարը գրավելուց հետո, Նադիր-Շահը գրավում է Քարուզը և սկսում Ճնդկական արշավանքը: Արշավանքի ամրող ընթացքում զորքի հետ է լինում Քյուչովկ Արութինը, որը և մանրամասն նկարագրում է այդ արշավանքը, մի քանի տեղ էլ իր մասին է խոսում, միշտ էլ իրեն անվանելով Թամրուրի (կրտսեր) Արութին: Հիշում է նաև Շիհանապատ (Դելչի) քաղաքում Նադիր-Շահի կազմակերպած Հանդեսի մասին, որտեղ ինքն էլ մյուս նվագածուների հետ սազ է նվագել:

Ճնդկական արշավանքը վերջացնելուց հետո, Նադիր-Շահը վերադառնում է Պարսկաստան: Նա Հերաթ քաղաքում սարքավորել է Տալիս Թավուզի (սիրամարգի) թախտը, (որի մանրամասն նկարագրությունն է բերում է Թամրուրի Արութինը), որից հետո արձակում է նվագածուներին: Այդ մասին Թամրուրի Արութինը գրում է: «Այս Հերաթ քաղաքում էլ մեզ ծառայությունից ազատեց: Մեզ համար գրություն տվեց և մենք ճանապարհ ընկանք դեպի Պոլիս»:

Սրանք են այն բոլոր տեղեկությունները, որ հայտնում է իր մասին Թամրուրի Արութինը:

Նրա օրագրությունից պարզվում է, որ նա

14. 1148 թիվն ըստ Հիշրայի թվականի է, որը հավասար է փրկչական 1735 թվին:

15. Քյուչովկ Արութինի այս խոսքերից երևում է, որ Նադիր-Շահին, Ճնդկական արշավանքի ընթացքում, ուղեցում էր նվագածուների մի խոմք, բայց թե այդ խմբի մեջ անդրկովկասից նվագածուներ կային: Թե ոչ, այդ մասին ոչինչ չի ասում Թամրուրի Արութինը:

Թյուրքիայից (թերեւս Պոլսից) էր եկել նադիր-Շահի մոտ, նախքան այս վերջինիս Ճնդկական արշավանքն ակսելը և Պոլիս վերադարձավ արշավանքից հետո, այս էլ Նադիր-Շահի հատուկ գրությամբ:

Ի՞նչ առնչություն ուներ Թամրուրի Արութինը Սովորանի դեսպանի հետ, ի՞նչ նպատակով էր եկել Նադիր-Շահի մոտ և ինչո՞ւ մնաց նրա մոտ որպես նվագածու, այդ հարցերի պատասխանը մենք շենք գտնում նրա օրագրում: Բայց դատելով այն բանից, որ նա Թյուրքիայից որպես նվագածու միայնակ չի եկել (նա իր մասին միշտ հոգնակի թվով է խոսում), այլև նրա հետ եկել են ուրիշ նվագածուներ, ենթադրում ենք, որ ինը՝ Նադիր-Շահն է նրանց հրավիրել Թյուրքիայից իր մոտ ծառայության, կամ, ավելի շուտ, ուղղակի որպես Սովորանի դեսպանի նվագածուներ, ուղեցում են դեսպանին Պարսկաստան, այնուհետև Նադիրի հրավիր մտնում նրա նվագախմբի մեջ:

Որ Թամրուրի Արութինը և մեր մեծ բանասեղծ Արութին-Սայաթ-Նովան միևնույն անձնավորությունը չեն, այդ ազացոցվում է վերոհիշյալ օրագրության և բանաստեղծի կենսագրության մեջ գտնվող հետեւյալ փաստերով.

1. Ամբողջ օրագրում ոչ մի տեղ հիշատակություն չկա ոչ Վրաստանի, ոչ էլ վրացական արքայազն Ճերակի մասին¹⁶, մինչդեռ հայտնի է, որ Ճերակը մասնակցել է Նադիր-Շահի Ճնդկական արշավանքներին: Եթե օրագրություն գրողը Սայաթ-Նովան լիներ, անպայման պետք է շատ ու քիչ հիշեր այդ մասին, որովհետև Վրաստանը նրա հայրենին է, այնտեղ էր անցկացրել իր մանկությունն ու պատանեկությունը մինչև իրեն վերագրվող ճանապարհորդությունները:

2. Թամրուրի Արութինը թյուրքիացի է (թերեւս պոլսեցի): այդ երեսում է նրանից, որ՝ ա) նա մեծ գովասանքով և շերմեռանդությամբ է խոսում օսմանյան կառավարության մասին¹⁷, բ) ծանոթ է Թյուրքիայի առևտրական քաղաքներին, ինչպես և այդ քաղաքների գործվածքեղենին և այլ ապանքների արտադրությանը¹⁸, գ) գիտի ամե-

16. Միայն մի տեղ Թամրուրի Արութինը, խոսելով Նադիր-Շահի կողմէց Ղանդահարը գրավելու մասին, պատմում է Ղանդահարում կատարված մի ոճրագործության մասին, թե ինչպես աղվանական խան Միրվայրը սպանել է տալիս վրացական խանին (Գորգին խանին) (գեղարք տեղի է ունեցել 1722 թվին):

17. «Գիտական նյութերի ծողովածու», էջ 102—103:

18. Նույն տեղը, էջ 101:

նայն մանրամասնություն Կոստանդնուպոլիսի թաղերի և շրջակա քաղաքների տեղադրումն և աշխարհացրական դիրքերի մասին։ Հաճախ, նկարագրելով նադիր-Շահի զորքերի տեղաշարժերը, իր փոստը հասկանալի դարձնելու համար, օրինակներ է բերում Կոստանդնուպոլիսի թաղերի հեռավորությունները միմյանցից և շրջակա քաղաքների դիրքերը միմյանց հանդեպ¹⁹։

Այդ բանը, այսինքն այստեղ հիշված թամրուգի Արութինի քաղաքական կովությունը թյուրքական պետության և մանավանդ նրա մայրաքաղաք Կոստանդնուպոլիսի մասին, մենք չենք տեսնում Արութին-Սայաթ-Նովայի մոտ։ Սայաթ-Նովան ոչ միայն շփոտի ամենայն մանրամասնություններ թյուրքական պետության և նրա մայրաքաղաք Կոստանդնուպոլիսի մասին, այլև խոսելով Մերձավոր Արևելքի և այլ երկրների նշանավոր քաղաքների մասին, ոչ մի տեղ չի հիշում Կոստանդնուպոլիսի անոնք։

3. Այսպիսի հմուտ սայաթնովագետ, ինչպիսին էր Գ. Հափիմերյանը, իր ձեռքի տակ ունենալով Քյուչովկ Արութինի պատմության ֆրանսերեն թարգմանությունը, որից նա վերցրել է իԱ խաղի մեջ հիշվող թավուզի թախտի նկարագրությունը²⁰, ոչ մի կապ չի տեսնում պատմություն գրող Թամրուգի Արութինի և երգիշ բանաստեղծ, նույնպես Թամրուգի Արութինի (Սայաթ-Նովայի) միջև։

4. Թամրուգի Արութինի հայերեն տառերով և թյուրքերեն լեզվով գրած գրությունը բոլորովին էլ զարմանալի չափությունը նայութեական թագավորությունը համարեն այն հանգամանքը, որ Սայաթ-Նովայից առաջ և հետո էլ հայ գուսանների մեջ մասս հայերեն իմանալով հանդերձ, հորինել և երգել են թյուրքերեն լեզվով, իսկ եթե ցանկացել են իրենց երգերը գրի առնել, օգտագործել են կամ օգտագործել են տվել (եթե իրենք գրագիտ չեն եղել) հայտառը թյուրքերնը։ Դրան որպես օրինակ՝ կարող են ծառայել բացի Սայաթ-Նովայից և Թամրուգի Արութինից, գուսաններ՝ թուջարը (1760—1840 թ. թ.), Քեշիշ օղլին (1804—... թ.), Նիսային և որիշները։

5. Եվ վերջապես, քանի որ Սայաթ-Նովան ծնվել է 1717 թվին, ապա 1738 թվին նա չէր կարող մասնակցել նադիր-Շահի արշավանքներին, ուստի և չէր էլ կարող որևէ օրագրություն գրել, որովհետև 1738 թվին նա կլիներ ոչ թե ըստ իր ադրբեջաներեն նիքնակենսագրական բանաստեղծության՝

19. Նույն տեղը, էջ 108—109։

20. Հափիմերյան, «Գուսանք», էջ 103։

19 տարեկան, այլ քնանմեկ տարեկան։ Ուրեմն, Թամրուգի Արութինը և բանաստեղծ Արութին Սայաթ-Նովան տարբեր անձնավորություններ են և որևէ առնչություն չունեն իրար հետ։

Իսկ ինչ վերաբերվում է Սայաթ-Նովայի ընդհանրապես օտար երկրներ ճանապարհորդություն կատարելու խնդրին, այդ մինչև չիմա էլ մնացել է անլուծելի²¹։

Վրաց Հերակլ արքայազնը Հնդկական արշավանքից հետո վերադառնում է Վրաստան 1744 թվին, բարձրանում Քարթալինիայի գաճը։ Այդ թվականին կամ դրանից իհշ հետո Սայաթ-Նովան մտնում է Հերակլ թագավորի արքունիքի երաժշտանոցը և դառնում նրա երգիշ-երաժիշտը։ Այդ մասին վկայում է դպիր իոնե Խելաշվելու տեսակցությունը Սայաթ-Նովայի հետ նկարագրող մի հատված, որը պահպանվել է վրաց իվանե արքայազնի «Կալամասսրա» գրքում։ Ըստ այդ հատվածի, Սայաթ-Նովան իր անցած օրերի մասին հետեւյալն է պատմել։

«Ես գիտեի սազ նվագել, սրա հետ միաւին պարսկական եղանակներին վրացերեն երգեր հարմարեցրի, ինչպիսի բան գեռ ոչ ոք չէր արել։ Երբ Իրակլի թագավորը ուզեց մեջլիս սարքել և երաժիշտներիս այնտեղ տարան, ես այն ժամանակ պարսկական եղանակներով վրացերեն երգեցի։ Թագավորին շատ զուր եկավ և խալաթ էլ շնորհեց։ Պրանից հետո շատերը երգեցին ինձ նմանվելով։ Ես ամենքի մոտ լավ էի ընդունված, ոչ միայն իմ երգով, այլև կատակներով և այլ աշխարհային գործերով»²²։

Թե ե՞րբ է վերջանում Սայաթ-Նովայի բանաստեղծական և երաժշտական գործունեությունը Վրաստանի թագավորի պալատում։ Հայտնի չէ։ Այդ մասին հայ և վրացի բանաստեղծները տարբեր կարծիքներ են հայտնում։ Ամենահավանականը Գեորգ Աստուրինն է։ Նա իր մի հոդվածում խոսելով պալատում Սայաթ-Նովայի բանաստեղծական գործունեության մասին, այն համարում է մինչև 1759 թվականը, ենելով այն բանից, որ այդ թվականը բանաստեղծի երգերի տակ նշված ամենավերշին թվականն է. և այդ շրջանի երգերում է, որ նա դիմում է Հերակլ թագավորին։ իրեն պալատից չհեռացնելու համար։

21. Գատելով նրա բանաստեղծություններից և Մերձավոր Արևելքի ժողովուրդների լեզուներին բազմիշապես պետք է եղրակացնել, որ Սայաթ-Նովան ճանապարհորդել է այդ երկրներում։

22. Տե՛ս «Գրական թերթ», 1936 թ., № 3 (115)։

23. Տե՛ս «Նոր ուղի», ամսագիր, 1930 թ., № 4—5։

• Սալաթ-Նովայի համար նեղ է եղել պալատական միջավայրը, թեպետ նա խորը զգացումներով էր կապված Հերակլ թագավորին, որին նա անվանում էր «Են գլխեն իմաստուն» և իր «Հոգեոր ծնողը», սակայն ամեն քայլափոխում զգացվում էր այն խորը հակասությունը, որ կար աշխատավոր ժողովրդի ծոցից դուս եկած երգչի և անձնապատճան արիստօկրատիայի միջն:

Նա ատելով ազնվական դասի մեջ ըռույն դրած կեղծիքը, անարդարությունն ու դափարական հոգին, հաճախ է ըմբոստացել ու ընդհարվել պալատական բարձրաստիճան անձանց հետ և իր հոգեկան ցասումն արտահայտել իր բանաստեղծությունների մեջ։ Այսպես օրինակ՝ բանաստեղծի վրացերեն խաղերից մեկի՝ «Աստղալուսով ժովն ինչպես կու ցամքի...» ծանոթագրության մեջ երգչի որդի Օհանը գրել է. «Այս թեշնիսով հորինածք, այսպես ասած՝ հայոցանք է։ Սալաթ-Նովան Թելավում կովել է... Վախտանգ արքայազնի հետ, իբրև անզգուշ մարդ, այնտեղ և ասել է արքայազնին այս ուսանավորը 1751 թվին²⁴:

Մի այլ երգի ծանոթագրության մեջ (ծանոթագրությունները վերցված են Օհանի 1823 թվին կազմած, իր հոր երգերի տետրակից) Օհանը գրել է. «Այս կծու խաղը նրան[նց] համար է ասել, որնք ի ծնե շար են և վատ, որ երկու այնպիսի մարդ կան, որոնց հայրը սխոր է, իսկ մայրը սոխ, իսկ իրենք իրենց անվանում են անանաս։ Սըրտումս դպրու ու ցավ շատ է, սակայն լեզուս չի պտտում ասելու»²⁵.

Բանաստեղծի երգերից և իր որդի Օհանի ծանոթագրություններից երևում է, որ պալատականներն օգտվելով Սալաթ-Նովայի սոցիալական ցածր դիրքից, նրա գեմ ինտրիգներ են սարքել, զրապատել են նրան և զանազան զրախոսություններով գանցաւվել թագավորին, որը և ծանր է անդրադարձել ճշմարտասեր և արդարությունը պաշտպանող բանաստեղծի վրա։

Երգչի հարաբերությունը պալատական միջավայրի և ազնվականության շրջապատի հետ, հետզհետե էլ ասելի է սարդացել այն սիրային հարաբերության պատճառով, որ առաջացել էր Սալաթ-Նովայի և Հերակլ Ռ.-ի քրոջ՝ Աննայի միջն²⁶,

Սալաթ-Նովան սիրել է թագավորի քրոշն ու սիրվել նրա կողմից։ Այդ բանը խիստ

թշնամական վերաբերմունք է առաջացրել ազնվական կողմից դեպի բանաստեղծը։ Նրանք անհանդուրժելի են համարել սոցիալական տարրեր աստիճանների վրա գտնվող երգչի ու ազնվուշու սերը։ Եվ նրանք՝ բանաստեղծի կարծեցյալ «դուստերն», որ մի ժամանակ լսելով նրա աննժան երգն ու երաժշտությունը, հիմանում էին նրանով, այժմ՝ թշնամանում են նրա հետ և հայածում նրան։

«Դուստերը դուշման շինեցիր, յագերուն ինչպիս դոստ անիմ...», ասում է Սալաթ-Նովան, դիմելով սիրուհուն։

Քանի գնում է, երգչի գրությունը վատանում է, մի կողմից սոցիալական տարրերության անանցանելի արգելքը, որ ընկած էր Սալաթ-Նովայի և իր սիրու առարկացի միջն, որը և վանում էր նրա սիրու ձգումների իրականացման հուզմուր, մյուս կողմից պալատականների հետզհետե ուժեղացող ինտրիգներն ու բամբասանքները կրկնապատկում են բանաստեղծի առաջական բարեկամությունը և առանց այն էլ շաբացած ցավն ու վիշտը և նա ամեն բանից հոգնած ու բեզզարծ, երգում է իր կարպի երգը.

Աշխարըս՝ մե փանչարա է, —թաղերումն ին բեզզարի իմ։ Մտիկ տըւլուն կու խուցվի, —դաղերումն ին բեզզարի իմ։ Երեկ լավ էր կանց վուր էսօր, —վաղերումն ին բեզզարի իմ։ Մարթ համաշա մեկ չի ըլի, —խաղերումն ին բեզզարի իմ։ Դուլաթըն էյթիբար շոմե, յիփոր կերթա ուրուշ-քարով։ Լավ մարթն էն է՝ գլուխըն պահե աշխարումը էյթիբարով։ Աշխարըս միզ մնալու չէ իմաստնասիրաց խարարով, —Գուլպիմ թըռչի բըլըռովի պես, —բաղերումն ին բեզզարի իմ։

Աշխարըս միզ մնալու չէ քանի նստինք զող ուսափին։ Հում կաթնակիր —Աթա՛մի զաթ, նա՛լաթ ըլի էստ քու բափին։ Համիկիրութինըս հատիկ է, շիմ դիմանում խալսի զափին։ Դոստիրը դուշման ին դառի, —յաղերումն բեզզարի իմ։

24. «Ազգագրական հանդես», 1903 թ.:

25. Գ. Էնոնյան, «Սալաթ-Նովա», էջ 27,

26. Բանասեր Գևորգ Աստառուց մատնացուց է առել Սալաթ-Նովայի և նա խաղը, որտեղ ծածկագրած է երգչի սիրունը՝ Աննայի անոնքը։ Բացի այս խաղից, կա նաև Սալաթ-Նովայի մի ուրիշ խա-

ղը, որի մեջ նույնպես ծածկագրած է երգչի սիրունը Աննայի անոնքը. դա Գ. Թարգերուանի կապմած ժողովածուի մեջ զետեղված «Սուսան Մըրուր» երգն է (այդ ժամանի տես՝ Մ. Աղայանի Հոդվածը՝ թիվ 9՝ Գրական թերթ»ի № 30-ում):

ի վերջու Սայաթ-Նովայի հոգեկան գերազանցության հպարտ գիտակցությունը, «Հանդուն» սեղը թագավորի քրոջ նկատմամբ, իր սիրած «խալիսի նոքարության» մեջ անսասան հավատարմությունը, սոցիալական արդարության քարոզը և այլ հանգամանքներ, այն աստիճանի խտացրին արդունիքի մթնոլորտը բանաստեղծի շուրջը, որ նա հեռացվեց պալատից և հարկադրված եղավ քահանայություն ընդունել:

Այսպիսով իր կամքին հակառակ, մեծ բանաստեղծը թողնում է պալատը, որտեղ չնայած տիրողների կամայականության, այնուամենայնիվ ծաղկում էր նրա հոգեպալլ արվեստը, և քաշվում միջնադարյան կրոնավորի մռայլ մենաստանը:

Թե ե՞րբ հեռացավ Սայաթ-Նովան թագավորի պալատից, հայտնի չէ: Ծնթադրվում

27. Սայաթ-Նովայի բահանա լինելը, առաջին անգամ նրա կրանքով ու գործունեությամբ զրացվողներին հայտնի է եղել 1923 թվին, երևանում պրոֆ. Լ. Միշտիսթենկանի Սայաթ-Նովայի մասին կարդացած գեկուցումների ժամանակ, ուր հաջրդվել է այդ հետարքըի նորությունը: Միշտիսթենկան այդ տեղեկությունը քաղել է տարիներ առաջ քեզվարան Հ. Աճառյանի Թալրիդը և առաջ գեղագիտում եղած միջոցին հավաքած ձեռագիրը ից ցուցակից, որը տպվել է «Հանդէս ամառօրեալի» 1908 թվականի համարներում և առանձին գրքով 1910 թվականին:

28. Այդ մասին տե՛ս վերևում, ծանոթագրության մեջ:

29. Սայաթնովագիտության մեջ եղել է այն կարծիքը, որ իր թե Հաղպատակ վանքում, Սայաթ-Նովան հոգենոր կոչմանը եղել է ոչ թե հասարակ արեգա, այլ՝ և պիսիոպաս:

Այս խնդիրն առաջին անգամ արծարծել է բանաստեղծ Հովհաննես Թումանյանը նա 1913 թվի ապրիլի 5-ին Թրիքիսիում Սայաթ-Նովայի հիշատակին նվիրված երեկությունը, հիմնվեռ Գյուտ ավագ բահանա Աղանյանի կազմած «Դիվան հայոց պատմության» ժողովածուի մի բանի փաստաթթվերի վրա, փորձում է ցուց տալ, որ 1771 թվին Միմեն կաթողիկոսի ձեռնադրած Դավիթ Վարդապետը, որ Դուկան կաթողիկոսի ժամանակ հասանում է արքեպիսկոպոսության և նշանակվում Հաղպատի առաջնակարգ նույնինքն Սայաթ-Նովան է: Հաղպատի միաբաններից այդ արքեպիսկոպոսն է միայն, որ կարող է Սայաթ-Նովան լինել. թե՛ իր բարքը, թե՛ իր վայելած հովանալորությունը Հերակլ II թագավորի կողմից և թե՛ մի բանի ուրիշ հանգամանքներ այդ են ապացուցում: Թամանյանի այս կարծիքը ապացուցող ուղղակի ցուցմունքներ չունենալու պատճառով, թնդադարության է նեմարկվում հենց նույն այդ օրվա երեկությի մասնակիցների կողմից, բայց և այնպես ամբողջովով ըն հերքվում:

Սայաթնովագիտ Գ. Ասատուրը 1926 թվին «Խորհրդային Հայաստան» օրաթերթի № 188-ում տպագրել է տալիս մի հոգեւած, պնդելով, որ Դավիթն այն անձ-

է, որ այդ պետք է տեղի ունեցած լինի 1753 թվականին, որովհետև այդ թվականին նա փակում է իր «եսաղի դավթարը»:

Մի բան միայն հաստատ է, որ Սայաթ-Նովան 1766 թվին Կախի քարվանսարարում քահանա էր Ստեփանոս անունով²⁷:

Այստեղ Տեր Ստեփանոս Սայաթ-Նովան արտագրելով հատվածներ Աստվածաշնչից և եկեղեցական այլ գրականությունից, կազմում է կրոնական մի ժողովածու, որտեղ և գրում իր հիշատակարանը²⁸:

Կնոք մահվանից հետ (որն ըստ Հայությանի պետք է տեղի ունեցած լինի 1768 թվին), Սայաթ-Նովան քահանայության մեջ էլ չգտնելով հոգեկան միսիթարություն, բոլորովին թողնում է աշխարհիկ կյանքը, և դառնալով աբեղա, քաշվում Հաղպատա վանքը²⁹:

Նավորությունն է, որ իրեն կաթողիկոս օծել տվեց, որի պատճառով էլ ծագեցին հայտնի Դավիթ-Դանիելյան վեճերը:

Գորդ Ասատուրի այս հեթագրությունն էլ հաջողաբերություն չենցագալ, այն ժամանակին հերթվեց բանահրենի կողմից:

Գորդ Ասատուրը դիմեց նոր պատումների, և տարիների համար ու բրտնաշան աշխատանքից հետո, կարողացավ լուծել թումանյանի հարուցած այդ կընծոտ խնդիրը. 1936 թվին Գ. Ասատուրի բարեկամնեղից՝ Սմբատ Տեր-Ավետիսյանը նրանն է հանձնում Հովհաննես վարդապետ Ղրիմեցու Պատմութիւն Հաղպատագիտ Վանիցցած ձեռագիրը, որից և 9. Ասատուրը հանում է Հաղպատա վանքը ատանորդ Դավիթ Ապիսկոպոսին վերաբերվող պատմությունը և այն հրատարակում 1936 թվին, «Խորհրդային գրականություն» աշխագրի № 1-ում: Պարզվում է, որ երբ 1795 թվին պարսիկների առաջապահ զորքը որովում է Թրիքիսի նուրի-Ղալաք բերքը, անմիջապես հարձակվում է բերդի թաղի վրա, կոսորում բերդի եկեղեցում ապավինված հոգեռականներին, իսկ սրանց մեծավորին՝ Հաղպատի առաջնորդ Դավիթ Ապիսկոպոսին կերպի է տանում, հարուսա փրկանը ստանաբույս և մասաւակով:

Ժիկ Դավիթ հպիսկոպոս, — գրում է Հովհաննես Ղրիմեցին, — վարեալ ի վերջաց, իրեկ ժամանի ի Դանձակ բաղարա, տևենալ զնա ումանց ի հայոց վաղպատակի թափեալ աղատեն, հատուցեալ զգին գլխոյ նորա և նորագարձ արարեալ Տիգիս թաղաք, իր ցաւգին եւ վշտագին սրահի յան սակաւուց վախճանի և թաղի անդէն 1796 և հայոց Ռ-Միս թուին» («Խորհրդային գրականություն», № 1, 1936 թ., էջ 190):

Այստեղ ապացուցվում է, որ Հաղպատա ատանորդ Դավիթ Ապիսկոպոսը և արեալ Սայաթ-Նովան միանույն անձնավորությունը չեն կարող լինել, որովհետև հայտնի է, որ Սայաթ-Նովան 1795 թվին սպանվել է Աղա-Մահմադ շահի արշավանքի ժամանակ, մինչ Դավիթ Ապիսկոպոսը նույն արշավանքինը լիներ, պատ հնա վերաբերձվել է, ապա հնա վերաբերձվել Թրիքիսի և այս տեղ էլ բնական մահով վախճանվել 1796 թվին:

«...Եվ այս ամենի ծայրին ահա լոռու ձորերում Հաղբատա վանքի քարերի մեջ անապատականի սևերում... աշխարհից ու նրա ուրախություններից, բեմուրվաթ յարից ու նրա նազերից բեզարած, հեռացավ Սայաթ-Նովան, մեր հոյակապ, մեր արքայական Սայաթ-Նովան», — գրել է Թումանյանը, Սայաթ-Նովայի Հաղբատա վանք մտնելու առթիվ³⁰:

Ի՞նչպես անցավ Սայաթ-Նովայի կյանքը Հաղբատա վանքում, արդյոք գո՞հ էր նա կրոնավորի իր վիճակից, շարունակեց ստեղծագործել, թե մենաստանի մոռալ միջավայրն ընդունիշտ լուցրեց հանճարեղ բանաստեղծին:

Այս հարցերի պատասխանները մենք գտնում ենք վերևում հիշված վրաց «Կալամասսրա» հին ձեռագրի հիշտակագրության մեջ և ժողովրդից հասած ավանդախառն պատմություններում:

Հստ «Կալամասսրա» ձեռագրի հիշտակագրության՝ XVIII դարի վեցշուրջ մի վրացի վանական՝ Իոնան Խելաշվիլի անունով, իր մի քանի ուղեկիցներով էջմիածնից Թթիլիսի վերադառնալիս, ճանապարհին այցելում են Հաղբատա վանքը, որտեղ և հրամիրվում են հյուրասիրության՝ վարդապետներից մեկի մոտ:

«Երբ որ այն վարդապետն իոնային իր խուցը տարավ, — պատմում է ժամանակագիրը, — հարցրեց նրա առողջությունը և ճանապարհորդության պատճառը, Իոնան ամեն ինչ պատմեց: Ապա նստեցին, փոքր ինչ զրուցեցին և հրամայեց նախաճաշ, և սկսեցին ուտել: Սրա հետ միասին լավ գինի ևս հրամցրեց և ինքն ևս լավ զվարձացավ: Այն ժամանակ հյուրասիրով վարդապետը ցած բերեց պատից կախած սալլ և սկսեց նվազել, ապա սկսեց այս երգը, վրացերեն լեզվով. «Խեղճ իմ պուփս, որ փորձանքի մեջ ընկար»³¹:

Հիշտակագիրը բերելով նրա երգած վրացերեն երգը, որի մեջ Սայաթ-Նովան ցած էր հայտնում իր թողած աշխարհիկ կյանքի նկատմամբ, ապա շարունակում է. «Իոնա դպիրը նայում էր զարմացած ու ասկա ասաց ինքն իրեն. Փայտ թշվառ մարդ, ինչպես է ողբում աշխարհիկ կյանքի թողնելը»: Ապա ավելացրեց.

30. Այս ժամանակ գենևա Թումանյանին հայտնի չեղեւ, որ գոյություն է ունեցել Սայաթ-Նովայի մի մասունք, որի մեջ Սայաթ-Նովան ինքը հիշտակառ է իր Ստեփանոս քահանա լինելու մասին:

31. Այս երգի հայերեն թարգմանությունը տե՛ս Գարեգին Լիոնյանի «Սայաթ-Նովա» գրքի առաջարանում:

ԻՈՒԱ. — Հայր, կուսակրոն եք, մի՞ք շեղվի դեպի ձախ:

ՎԱՐԴԱՊԵՏ. — Երբ ես քո հասակում էի, թե դեպի ձախ էի գլորվում, թե դեպի աչ...

ԻՈՒԱ. — Կայ իմ գլխին, մի՞թե դրա համար եք ողբում:

ՎԱՐԴԱՊԵՏ. — Դրա համար էլ եմ ողբում, քեզ համար էլ, որ այսպես մանուկ հասակում դարձել ես կուսակրոն:

ԻՈՒԱ. — Գերադասելի է այդ անել մանուկ հասակից, որպեսզի մարդ բարուն սովորի: Եթե դուք էլ մանուկ հասակից վանք մտնեիք, հիմա այդպես վշտալի չեթ լինի:

ՎԱՐԴԱՊԵՏ. — Եթե իմ առաջնորդն ինձ հանգիստ թողներ, ես աշխարհական լինելուց կգերադասելի այս հոգկորական լինելուց:

ԻՈՒԱ. — Հրամայեցեք դուք ո՞վ եք:

ՎԱՐԴԱՊԵՏ. — Ես եմ թշվառ Սայաթ-Նովան, եթե լսած ես:

ԻՈՒԱ. — Այս, լսել եմ ձեր համբավը երգի ու նվազի և խրախճանքի ասպարեզում... Քանի որ աշխարհից ձեռք եք քաշել, սազից ու երգերից էլ պետք է ձեռք քաշել:

ՎԱՐԴԱՊԵՏ. — Իմ առաջնորդն ես այդպես պահանջեց, բայց ես այսպիսի պահանջ դրի, որ քանի այս լարերը քաշած են այս սազի վրա, ես նրանցից ձեռք շեմ քաշելու հսկ այս լարերը երբ ինձ արելա օրհնեցին, մնացել էին ծոցիս մեջ և սրանք էլ ինձ հետ միասին օրհնվեցին: Այժմ օրհնը ված յարերի վրա եմ նվազում եղանակները...»³²

Այս հիշտակագրությունից պարզվում է, որ՝

ա) Սայաթ-Նովան հոգեւոր կոչում է ընդունել հակառակ իր ցանկության, ուղղակի բռնի կերպով են ստիպել նրան այդ քայլն անելու: «Եթե իմ առաջնորդն ինձ հանգիստ թողներ, ես աշխարհական լինելը կգերադասելի այս հոգկորական լինելուց», — ասում է բանաստեղծը: Ենթադրվում է, որ «առաջնորդն» նրա այդ խնամակալն ու հոգարձուն եղել է Հերակլ II թագավորը:

բ) Վանք մտնելուց հետո, չի հաշավել կրոնավորի իր վիճակի հետ: Զղչացել է, որ թողել է աշխարհիկ փառքն ու վայելը և դարձել կուսակրոն հոգկորական:

«Աշխարհական էի, քահանանալն ինչի՞ էր պետք, Մի հարցնող լինի՝ արեղա դառնալն ինչի՞ս էր պետք»:

գ) Մեծ երգի ստեղծագործական ոգին չի ճգնվել վանական միջալայրում, քանի որ,

32. Տե՛ս «Գրական թերթ», 1936 թ., № 3 (115).

ինչպես ինքն է ասում, իր «սաղի սիմերն էլ իր հետ օրնված էին»: Այդ է վկայում հիշատակագրութիւնն մեջ եղած բանաստեղծությունը: Այդ է վկայում նաև ժողովրդի մեջ պահպանված այն ավանդությունը, որ գրի է տուել Հախվերդյանը XIX դարի կեսերին.

«Գիտեմ միայն,— ասում է Հախվերդյանը,— որ Թիֆլիսու խաղ սիրող տղերքն զանքում էլ չեն տըւել դադրա իրանց երգին, ու խստակրօն վարդապետի վեղարի տակն էլ կարծելով իրենց զուարձ աշուղի վառվուն զուփին, դարսել են զրուցք, իրը թէ Սայեաթ-Նովի ականջն ընկնում է մէկ երեւելի օտարական աշուղի Թիֆլիս գալն»³³: Նա վախենալով իր քաղաքի յաղթվելու համար, սատիկ ձմեռին մտիկ չը տրաւած՝ շտապով գալիս է Հաղպատից Թիֆլիս. ձեռաց վերէ գալի մհծ բերդի եկեղեցում, ու ոչ ովին բան շասած՝ թաքում զուս է սրբքրվում առաջնորդարանից: Հաղպատու առաջնորդ՝ Դավիթ Կապիսկոսն, որն լսել էր նրա զալն, չը տեսնելով նոր եկած վարդապետին՝ պահանջում է նրան, ու իմանալով նրա առաջնորդարանում ևս չըլիին, շատ նեղացած՝ հրամայում է իր սպասաւորներուն, որ նրան գրտնեն: Սրանք պարուելիս տեսնում են որ Սայեաթ-Նովին՝ աշխարհականի շորերն հարին, իր հին ընկերներու ու բարեկամներու մէջն՝ կամրջի տակն սառած Քոփ վրայ նրաւած, քամանչէն ձեռին՝ բաց է արել նոր եկած աշուղի հետ՝ վէճն (բաս): Ճէնց յաղթելու վրա է ըլում, որ վրայ են հասնում եպիսկոպոսի սպասաւորներն»:

Շատ հավանական է, որ Հաղպատա վանրիշ քախչող և Թրիխուում իրեն կերուիւմի տվող արեղա Սայեաթ-Նովան, կատարելով քամանչէն տված իր խոսքը՝ ոքանի սաղ է Սայեաթ-Նովին, շատ բան կու տեսնիս, քամանչա, ստեղծագործել է մինչև իր կյանքի վերջը»³⁴:

Սայեաթ-Նովայի մահվան մասին իան տարբեր կարծիքներ: Բայ Գեորգ Հախվերդյանի կարծիքի, երբ 1795 թվին պարսից ԱղաՄամադ խանը արշավում է Անդրկովկաս, Սայեաթ-Նովան լսելով նրա հեծելազորի մոտենալը Թրիխուիին, Հաղպատա վանքից շտապ կերպով գալիս է Թրիխոսի՝ իր զավակներին կոտորածից փրկելու համար, և նրանց

33. Հախվերդյանը ծանոթ լինելով «Կալամասըստարայի մեջ Սայեաթ-Նովայի վերաբերյալ տեղեկություններին», դժվարանում է հավատալ ժողովրդական այս զրուցին:

34. Սայեաթ-Նովայի կրոնական շրջանի գրած բանաստեղծություններից մինչև հիմա հայտնի է միայն մեկը՝ «Կալամասըստարա» ձեռագրում պահպանվածը:

ուղարկելով Հյուսիսային Կովկաս, ինքը մնում է քաղաքում:

«Սայեաթ-Նովին դնում է իր զավաներուն ձանապարհ թէ չէ, — գրում է Հախվերդյանը իր զրի առաջարանում, — պարսիկը մըտնում են Թիֆլիս: Հաղպատու առաջնորդարանն հէնց բերդի տակն ըլելով՝ թշնամիքն տուն են ընկնում եկեղեցու գավիթն ու կցում են կոտորելն ու կողոպտելն: Սայեաթ-Նովին վրայ են հասնում եկեղեցում աղօթք անկիս: Սրանից պահանջում են դուս զալն ու հաւատու ուրանալն. բայց կրօնատրն պարսից թրերու տակն աւանդում է հոգին՝ ասելով.»

«Զըխմանամ քլիսադան, դօնմանամ՝ հսադան»:
«Եկեղեցուց դուս շիմ գա, Ցիսուին շիմ ուրանա»):

...Մի քանի օրից՝ պարսից Թիֆլիսին դուս գնալուց հետո, վեր են առնում նրա մարմինն ու թաղում են Մեծ բերդի եկեղեցու հյուսիսային փոքր դրան առջևն»³⁵:

Այս կարծիքը ծնունդ առնելով Սայեաթ-Նովայի կենսագրության սկզբնադրյուր Հախվերդյանի զրից, սայաթնավագետների մհծ մասի համար հանդիսացել և հանդիսանում է որպես բանաստեղծի մահվան մասին եղած կարծիքներից ամենահավանականը:

Սայեաթ-Նովայի սպանման երկրորդ կարծիքի մասին առաջին անգամ գրել է վրաց գրող Զ. Մթածմինդելին 1878 թվին «Թրոերա» շաբաթաթերթի մեջ (№ 120):

Նա իր պատմությունը գրելիս առաջնորդվել է Հախվերդյանի գրքով, իսկ իր կողմից դրա վրա ավելացրել է ծերումիներից լսած մի քանի բանավոր տեղեկություններ: Նրա պատմածը հետևյալն է.

«Երբ Սայեաթ-Նովան թողել է հոգեորականությունը և եկել է Թիֆլիս, նույն ժամանակ լուր է տարածվել Աղա-Մամադի խանի երկրորդ (?) անգամ արշավելու մասին: Այս լուրի վրա շատ է նեղվել ազգաբնակությունը և Սայեաթ-Նովան էլ իր աղջիկներին ուղարկել է Դուշեթի կողմերը, իսկ ինքը մնացել է Թիֆլիսում և ասել է էրեկլե թագավորին, «Ես ծնվել եմ այստեղ, այստեղ էլ

35. Հախվերդյան, «Գուսանը», 1852 թ., էջ Ժ- առաջարան), Այս կարծիքը գրեթե նույնությամբ հայտնել է Ա. Թիվնազարյանն իր «Գաղտնիք Ղարաբաղից» գրքում: Այստեղ Սայեաթ-Նովան հիշված է ոչ թե Ստեփանոս (բանաճա), այլ Հարություն վարդապետ անունով (տե՛ս նշված աշխատությունը, հրամագիւղակած 1886 թ. ՍՊԲ, էջ 167—168):

պետք է մեռնեմ թշնամու դեմ մղած պայցարում։ Եվ ճշմարիտ, նա և նրա ժամանակակից սազ ու քամանչա նվագողներն առաջնորդելիս են եղել էրեկլե թագավորի զորքերին։ Թեև Օրթաճալի մոտ հաղթությունը տարել են վրաց զորքերը, բայց հետո հաջողություններ ունեցել է թշնամին և, կանգնելով Նարի-Ղալայի բերդի առջև, ուր Սայաթ-Նովան ու նրա բարեկամ ժողովորդը կատաղի դիմադրություն են ցուց տվել թշնամուն, պարսիկները հաղթել են և մյուսների հետ սպանել են նաև Սայաթ-Նովային»³⁶։

Բացի դրանցից, կա նաև մի այլ կարծիք, որն առաջ է քաշել վրաց պոետ Գ. Լեռնիձեն։ Նա հենվելով վրացական մի աղբյուրի վրա, աշխատել է հերքել Սայաթ-Նովայի մահվան վերաբերյալ վեղոհիշյալ կարծիքները և ապացուցել, որ Սայաթ-Նովան ոչ թե սպանվել է, այլ բնական մահով վախճանվել 1801 թվին»³⁷։

Նրա այդ կարծիքը չեղ կարող լուրջ քըննադատության դիմանալ, որովհետև Սայաթ-

Նովայի սպանվելու մասին կար մի ավելի զորավոր փաստ՝ նրա որդի Օհանը 1823 թվին իր հոր բանաստեղծություններն առանձին դավթարի մեջ արտագրելիս, մի բանաստեղծության վերջում գրել է հետևյալ ծանոթագրությունը։

«Այս մովսամբազը Սայաթ-Նովան հորինեց, որ շահը (Աղա Մահմեդ խանը) պետք է գա մեծ ժխորով նրա գերեզմանի վրա, այս է պատճառը, որ նրան մաս մաս արին...»։

Եվ այսպես Սայաթ-Նովան՝ հայ ժողովրդի անցյալի կյանքի ու տանջանքի խորհրդանշանը, 1795 թվին ընկնում է Թբիլիսիի հեկեղեցու պատերի սակ, թումանյանի ասած խոսքերով՝ «Ճանճարի կնիքը ճակատին, քիստոնեության խաչը ձեռքին, դաշույնը խրած իր մեծ ու ազնիվ սրտի մեջ»։

Սայաթ-Նովայի կենսագրությունը ցուց է տալիս այն մասին, թե պատմական ինչ դարշուանում է ապրել, թե որքան դժվարածին պետք է լիներ նրա տաղանդը, երբ երկրում տիրում էին արևելյան բռնապետությունն ու ճորտատիրությունը, և երբ սոցիալական դաժան հալածանքների պայմաններում ունահարվում էր մարդկային իրավունքը և խեղդվում ազատություն ու արդարություն քարոզող յուրաքանչյուր անհատի ըմբուստ ձայնը։

36. Գ. Լեռնյան, «Սայաթ-Նովա», 1931 թ., էջ 36։

37. Լեռնիձի այդ կարծիքը ժամանակին հերքել է արվեստի վաստակավոր գործիւ Գարեգին Լևոնյանը 1931 թվին իր «Սայաթ-Նովա» գրքում։

